

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2017 թ. ապրիլի 11-ի նիստում
1.5 կետի փոփոխություն (հիմք՝ 23.02.2018թ. N26 գիտական խորհրդի որոշումը)
Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Մինասյան

*Հիմք՝ ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի
26.05.2012թ. նիստում հաստատված «ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի
ամբիոնների վարիչների ընտրությունների» ընթացակարգ*

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույն կանոնակարգով սահմանվում է «Շիրակի Մ. Նալբանդյան անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) ամբիոնի վարիչի (այսուհետ՝ ամբիոնի վարիչ) պաշտոնի թեկնածուների առաջադրման, ընտրությունների անցկացման և ամբիոնի վարիչի պաշտոնում հրամանագրելու կարգը:
- 1.2 Ամբիոնը ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացի կազմակերպման կառուցվածքային հիմնական ստորաբաժանում է, որը գործում է ՇՊՀ կանոնադրության, ֆակուլտետի կանոնադրության և իր կանոնադրության հիման վրա:
- 1.3 Ամբիոնը միավորում է մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմ, կազմակերպում և իրականացնում է ուսումնական, ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործընթացներ: Ամբիոնը ապահովում է բարձրորակ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը և նրանց որակավորման բարձրացումը:
- 1.4 Ըստ կառուցվածքային ենթակայության՝ ՇՊՀ ամբիոնները լինում են՝
 - 1.4.1 առանձնակի կարգավիճակով («Ռեզիդենտական ամբիոն», որի գործունեությունը համակարգվում է ռեկտորի կամ ռեկտորի հրամանով՝ պրոռեկտորներից մեկի կողմից),
 - 1.4.2 ֆակուլտետային (գործունեությունը համակարգվում է ֆակուլտետի ղեկանի կողմից):
- 1.5 Ամբիոնի վարիչ կարող է ընտրվել գիտությունների այն պրոֆեսորը կամ դոցենտը, որն ունի գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան (տվյալ ամբիոնի մասնագիտական և հարակից ուղղություններով),

վերջին տաս տարվա աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն հինգ տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ:

Թեկնածուության բացակայության դեպքում մեկ ամսվա ընթացքում հայտարարվում է կրկնակի մրցույթ, որին կարող են մասնակցել նաև գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք՝ նույն պահանջով (բացառությամբ ռազմական ամբիոնի պետի ընտրության դեպքում, որտեղ մրցույթին կարող են մասնակցել գիտական աստիճան, կոչում և գիտամանկավարժական աշխատանքային ստաժ չունեցող անձինք, իսկ մրցույթը կազմակերպում և անցկացնում է ՊՆ-ն):

Ամբիոնի վարիչի պաշտոնում կրկնակի մրցույթ հայտարարելու արդյունքում համապատասխան թեկնածուության բացակայության դեպքում ՇՊՀ ռեկտորը նշանակում է ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ առավելագույնը երկու տարի ժամկետով (անկախ գիտական աստիճանի կամ գիտական կոչումի առկայությունից)՝ մինչև նոր մրցույթ հայտարարելը:

Ամբիոնի վարիչն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի, քան երկու ժամկետ անընդմեջ:

- 1.6 Ամբիոնի վարիչն ընտրվում է ՇՊՀ գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, մինչև հինգ տարի ժամկետով:
- 1.7 Ամբիոնի վարիչի ընտրությունների անցկացման ամսաթիվը որոշվում է ռեկտորի հրամանով ոչ ուշ, քան երկու ամիս առաջ՝ մինչև գործող ամբիոնի վարիչի լիազորությունների ժամկետի լրանալը:
- 1.8 Ընտրված ամբիոնի վարիչին պաշտոնի է նշանակում ռեկտորը:
- 1.9 Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է գիտամանկավարժական աշխատանք:

2. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

- 2.1 Ամբիոնի վարիչի պաշտոնն ընտրովի է և պաշտոնի տեղակալումն իրականացվում է բաց մրցույթային ընտրությամբ:
- 2.2 Ամբիոնի վարիչի ընտրությունը նշանակվում է ՇՊՀ ռեկտորի հրամանով: Այդ մասին հայտարարությունը ընտրություններից առնվազն երեսուն օրացուցային օր առաջ հրապարակվում է ՇՊՀ համացանցային կայքէջում և առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում:
- 2.3 Թեկնածուների առաջադրումը դադարեցվում է հայտարարության հրապարակումից երեսուն օրացուցային օր հետո: Թեկնածուները ՇՊՀ գիտական քարտուղարին առձեռն ներկայացնում են առաջադրման վերաբերյալ հետևյալ փաստաթղթերը՝
 - ա. դիմումը՝ հասցեագրված ռեկտորին.
 - բ. կադրերի հաշվառման անձնական թերթիկ.
 - գ. աշխատանքային գրքույկից քաղվածք.
 - դ. ինքնակենսագրությունը (CV).
 - ե. բարձրագույն կրթության դիպլոմ(ներ)ի պատճեն(ներ)ը.
 - զ. գիտական աստիճան(ներ)ը և գիտական կոչում(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը.
 - է. հրատարակված գիտական աշխատությունների և գյուտերի ցուցակը.
 - ը. որակավորման բարձրացում անցնելու մասին վկայականի պատճենը (առկայության դեպքում).
 - թ. ՇՊՀ ամբիոնի հնգամյա զարգացման ծրագիրը (հայեցակարգը)՝ փակ և ստորագրված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման

վերջնաժամկետից հետո.

ժ. տվյալներ պարզևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:

Փաստաթղթերի պատճենները ներկայացվում են բնօրինակների հետ: Բնօրինակները պատճենների հետ համեմատվելուց հետո վերադարձվում են:

- 2.4 Փաստաթղթերը ստանալով՝ հավակնորդը գիտական քարտուղարից ստանում է հանձնումը հավաստող տեղեկանք:
- 2.5 Հայտերը ընդունելիս գիտական քարտուղարը պարտավոր է ստուգել հայտի համապատասխանությունը սույն կանոնակարգի 2.3 կետում ներկայացված պահանջներին: Փաստաթղթերի թերի լինելու դեպքում հավակնորդը այդ մասին տեղեկացվում է նույն պահին: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում:
- 2.6 Հայտերի ընդունման ավարտի հաջորդ օրը գիտական քարտուղարը ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ(ներ)ը ներկայացնում է ՇՊՀ ռեկտորին:
- 2.7 Ամբիոնի վարիչի պաշտոնատեղի հավակնորդի գործը չի ընդունվում, եթե պահանջվող փաստաթղթերը լրիվ չեն կամ չի պահպանվել ներկայացման ժամկետը: Ամբիոնի վարիչի պաշտոնատեղի հավակնորդի դիմումը մերժվում է ռեկտորի կողմից, եթե ներկայացված փաստաթղթերը չեն բավարարում մրցույթի պայմանները:
- 2.8 ՇՊՀ ռեկտորի կողմից մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած հավակնորդի մակագրված դիմումը (կից փաստաթղթերով) հանձնվում է մրցույթային հանձնաժողովի նախագահին:
- 2.9 Մրցույթային հանձնաժողովի քննարկումից հետո ամբիոնի վարիչի պաշտոնի համար դիմում ներկայացրած թեկնածուների ցուցակը (ըստ ազգանունների այբբենական հաջորդականության, որտեղ նշվում է թեկնածուի ազգանունը և անունը, գիտական աստիճանն ու կոչումը, զբաղեցրած պաշտոնը) ՇՊՀ գիտական քարտուղարը ամբիոնի նիստից առնվազն տասը օրացուցային օր առաջ գրավոր ծանուցում է ամբիոնի վարիչի թեկնածուներին, համապատասխան ֆակուլտետի ղեկանին:
- 2.10 Մրցույթային հանձնաժողովի նախագահը ամբիոնի նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ ամբիոնի նիստը վարողին (որը ֆակուլտետի ղեկանն է, իսկ ֆակուլտետի ղեկանի՝ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնին թեկնածություն ներկայացնելու դեպքում՝ ռեկտորը կամ ռեկտորի հանձնարարությամբ՝ ՇՊՀ պրոռեկտորներից մեկը) տրամադրում է ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդ(ներ)ի փաստաթղթերի փաթեթ(ներ)ը:

3. ԱՄԲԻՈՆԻ ՆԻՍՏՈՒՄ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ

- 3.1 Ամբիոնի նիստի նախագահողը գրավոր ծանուցումը և ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդ(ներ)ի փաստաթղթերի փաթեթ(ներ)ը ստանալուց հետո նշանակում է ամբիոնի նիստի օրը ոչ ուշ, քան ընտրություններից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ: Այդ մասին նա տեղեկացնում է ՇՊՀ գիտական քարտուղարին, իսկ վերջինս ապահովում է ռեկտորի, ամբիոնի վարիչի

պաշտոնի թեկնածուների և համապատասխան ամբիոնի աշխատողների իրազեկվածությունը:

- 3.2 Ամբիոնի նիստն իրավագոր է ամբիոնի գիտամանկավարժական կազմի առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում: Ամբիոնի ուսումնասօժանդակ համակազմի աշխատողներն ամբիոնի նիստին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:
- 3.3 Ամբիոնի նիստում որոշումներն ընդունվում են ամբիոնի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ (կեսից ավելին), բաց քվեարկությամբ:
- 3.4 Նախագահողը հարցի քննարկումը սկսում է թեկնածուների առաջադրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվությամբ և ներկայացնում է թեկնածուների ցուցակը:
Առաջադրման գործընթացում սույն կանոնակարգի էական խախտումներ ի հայտ գալու դեպքում ամբիոնն իրավասու է հետաձգել նիստը մինչև ռեկտորի կողմից այդ հարցի կապակցությամբ որոշման ընդունումը:
- 3.5 Ամբիոնի նիստին ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուների ներկայությունը պարտադիր է: Ամբիոնի վարիչի թեկնածուի բացակայության դեպքում ամբիոնը որոշում է կայացնում թեկնածությունը քննարկելու կամ քննարկումից հանելու վերաբերյալ:
- 3.6 Նախագահողը ամբիոնի հնգամյա զարգացման ծրագրային ելույթի համար ձայնը, ըստ ցուցակի, տալիս է ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներին: Ելույթի տևողությունը որոշում է ամբիոնը:
- 3.7 Նախագահողի առաջարկությամբ յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո ամբիոնի նիստի մասնակիցները (բացառությամբ թեկնածուի հետ ազգակցական կապ ունեցող աշխատողների) կարող են հարցեր տալ: Հարցերը սահմանափակվում են նախագահողի առաջարկի հիման վրա ամբիոնի կայացրած որոշմամբ: Հարց ու պատասխանին հաջորդում են ելույթները:
Ամբիոնի նիստի մասնակիցները քննարկում, լրամշակում են ամբիոնի վարիչի հավակնորդ(ներ)ի հնգամյա զարգացման ծրագիրը (ծրագրերը), հարկ եղած դեպքում՝ ներառում առանձին խնդիրներ:
- 3.8 Ամբիոնի նիստը նախագահողը ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդ(ներ)ի քննարկած, լրամշակած հնգամյա զարգացման ծրագիրը (ծրագրերը) (կից կարծիքներով) ընտրություններից առնվազն երեք աշխատանքային օր առաջ տրամադրում է ՇՊՀ մրցույթային հանձնաժողովի նախագահին՝ ներկայացնելու ՇՊՀ գիտական խորհրդի քննարկմանը:

4. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՅՈՒՄԸ

- 4.1 ՇՊՀ մրցույթային հանձնաժողովի նախագահը ներկայացնում է գիտական խորհրդի նիստի օրակարգում ամբիոնի վարիչի ընտրության հարցը՝ շեշտը դնելով ամբիոնի վարիչի պաշտոնի պահանջների, ամբիոնի և մրցույթային հանձնաժողովի որոշումների վրա:
- 4.2 Գիտական խորհրդի նիստին ամբիոնի վարիչի թեկնածու(ներ)ի ներկայությունը պարտադիր է:

- 4.3 Նախագահողը ծրագրային ելույթի համար, ըստ ցուցակի, ձայնը տալիս է ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներին: Ելույթի տևողությունը որոշում է գիտական խորհուրդը:
- 4.4 Նախագահողի առաջարկությամբ յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո գիտական խորհրդի նիստի մասնակիցները կարող են հարցեր տալ: Հարցերը սահմանափակվում են նախագահողի առաջարկով և գիտական խորհրդի կայացրած որոշմամբ:
- 4.5 Թեկնածուների ծրագրային ելույթներից հետո սկսվում է թեկնածությունների քննարկումը, որին կարող են մասնակցել նիստի բոլոր ներկաները՝ բացի թեկնածուի հետ ազգակցական կապ ունեցող աշխատողներից:
- 4.6 Քննարկման ժամանակ ելույթների տևողությունը սահմանում է գիտական խորհուրդը: Անհրաժեշտության դեպքում գիտական խորհրդի համաձայնությամբ նախագահողը կարող է ավելացնել ելույթ ունեցողին հատկացված ժամանակը: Թեկնածությունների քննարկումը դադարեցվում է նախագահողի առաջարկության հիման վրա գիտական խորհրդի կայացրած որոշմամբ:
- 4.7 Քննարկումների ավարտից հետո թեկնածուներին տրվում է լրացուցիչ ելույթի հնարավորություն: Ելույթի տևողությունը սահմանում է գիտական խորհուրդը:
- 4.8 Քննարկման ավարտից հետո ինքնաբացարկ չհայտնած թեկնածուների անուն-ազգանունները գիտական խորհրդի որոշմամբ գրանցվում են քվեաթերթիկում:
- 4.9 Նախագահողը գիտական խորհրդի անդամներին ներկայացնում է փակ, գաղտնի քվեարկության կարգը:
- 4.10 Նախագահողի առաջարկի հիման վրա գիտական խորհրդի կայացրած որոշմամբ փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար գիտական խորհրդի անդամներից ընտրվում է կենտ թվով (երեք հոգուց ոչ պակաս) հաշվիչ հանձնաժողով: Ամբիոնի վարիչի թեկնածուները, թեկնածուների հետ ազգակցական կապ ունեցող անձինք չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 4.11 Մեկ թեկնածուի դեպքում քվեաթերթիկի մեջ պետք է նշվի թեկնածուի ազգանունը, անունը, «կողմ» և «դեմ» բառերը (Հավելված 1): Երկու և ավելի թեկնածուների քվեարկության համար քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով պետք է նշվեն թեկնածուների ազգանունը, անունը, իսկ վերջին տողում՝ «բոլորին դեմ եմ» արտահայտությունը (Հավելված 2): Քվեաթերթիկների դարձերեսին պետք է լինի գիտական քարտուղարի ստորագրությունը:
- 4.12 Հաշվիչ հանձնաժողովը գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամի տալիս է մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է գիտական խորհրդի անվանացանկում:
- 4.13 Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում հաշվիչ հանձնաժողովի նիստի արձանագրություն (Հավելված 3):
- 4.14 Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝
 - ա. «կողմ» կամ «դեմ» բառերի դիմաց (միակ թեկնածուի քվեարկության դեպքում) կատարված է նշում.

բ. քվեարկված է միայն մեկ թեկնածուի օգտին կամ՝ «բոլորին դեմ եմ»-ի օգտին (երկու և ավելի թեկնածուների քվեարկության դեպքում):

Որևէ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ»-ի օգտին քվեարկելու համար համապատասխան տողի վանդակում կատարվում է «V» նշումը:

Մնացած դեպքերում, ինչպես նաև քվեաթերթիկում չնախատեսված նշումների, ընդգծումների և այլ նշանների առկայության դեպքում, քվեաթերթիկը համարվում է անվավեր:

Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Եթե քվեաթերթիկն անվավեր ճանաչելն ազդում է ընտրությունների արդյունքների վրա, ապա այդ հարցի կապակցությամբ հանձնաժողովի անդամ(ներ)ի հատուկ կարծիք(ներ)ը քննարկվում է(են) գիտական խորհրդի կողմից և կայացվում է համապատասխան որոշում:

4.15 Ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստացել է գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին:

4.16 Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, որից հետո գիտական խորհուրդը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրության մեջ ամրագրված տվյալները:

4.17 Հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալների հրապարակման արդյունքում ՇՊՀ գիտական խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1. Ամբիոնի վարիչ ընտրվելու մասին,
2. Կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,
3. Ընտրությունները չկայացած ճանաչելու մասին,
4. Ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:

4.18 Երկու և ավելի թեկնածուների դեպքում որևէ թեկնածուի կողմից գիտական խորհրդի ներկա անդամների ձայների կեսից ավելին չհավաքելու դեպքում գիտական խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են՝

- ա. առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուները.
- բ. առավելագույն ձայներ ստացած առաջին թեկնածուն և նույնքան ձայներ ստացած երկրորդ ու հաջորդ թեկնածուները.
- գ. հավասար առավելագույն ձայներ ստացած երկու և ավելի թեկնածուները:

4.19 Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն կանոնակարգի համաձայն: Կրկնակի քվեարկության դեպքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին:

4.20 Ամբիոնի վարիչի ընտրությունները համարվում են չկայացած, եթե՝
ա. ամբիոնի վարիչի պաշտոնի միակ թեկնածուն չի ստացել գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը.
բ. կրկնակի քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը:

5. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- 5.1 ՇՊՀ ռեկտորը ամբիոնի վարիչի պաշտոնում մրցույթով անցած անձի հետ կնքում է մինչև հինգ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր և նրան հրամանագրում ամբիոնի վարիչի պաշտոնում:
- 5.2 Պայմանագրում նշված պաշտոնավարման ժամկետը լրանալու մասին նշված ժամկետի ավարտից երկու ամիս առաջ ՇՊՀ ռեկտորը, օրենքով սահմանված կարգով, գրավոր ծանուցում է ամբիոնի վարիչին և նշանակում նոր ընտրություններ՝ սույն ընթացակարգի համաձայն:
- 5.3 Պայմանագիրը կարող է դադարեցվել կամ վաղաժամ լուծվել գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով, ինչպես նաև կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ամբիոնի կառուցվածքի փոփոխման (ամբիոնի բաժանման, միավորման) պատճառներով: Պայմանագիրը դադարեցնելու կամ լուծելու որոշման մասին կողմերը միմյանց իրազեկում են երկու ամիս առաջ՝ պարզաբանելով որոշումն ընդունելու պատճառները, որից հետո ՇՊՀ ռեկտորը նշանակում է ամբիոնի վարիչի նոր ընտրություններ՝ սույն ընթացակարգի համաձայն:
- 5.4 Առանց կառուցվածքային փոփոխությունների իրականացման՝ ամբիոնի անվանափոխության դեպքում ընտրված ամբիոնի վարիչը կարող է ռեկտորի հրամանով շարունակել իր պաշտանավարումը մինչև աշխատանքային պայմանագրով սահմանված ժամկետի լրանալը:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Գիտական խորհրդի «___» _____ թ. նիստում (արձանագրություն թիվ ___)
ամսաթիվ, տարեթիվ

_____ ամբիոնի վարիչի ընտրության փակ (զաղտնի) քվեարկության

_____ *թեկնածուի ազգանուն-անուն*

կողմ դեմ

*) «V» նշումը կատարվում է «կողմ» կամ «դեմ» գրառումներով վանդակներից միայն մեկում: Թեկնածույանը կողմ լինելու դեպքում նշում է կատարվում «կողմ», իսկ դեմ լինելու դեպքում՝ «դեմ» գրառումամբ վանդակում:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
Գիտական խորհրդի «___» _____ թ. նիստում (արձանագրություն թիվ ___)
ամսաթիվ, տարեթիվ

Ամբիոնի վարիչի ընտրության փակ (գաղտնի) քվեարկության

Հ	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆՇՈՒՄԸ
1.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
2.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
3.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
4.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
5.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
6.	ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ	

*) Որևէ թեկնածուի կողմ լինելու դեպքում տվյալ թեկնածուի անվան դիմաց, իսկ բոլորին դեմ լինելու դեպքում՝ քվեաթերթիկի համապատասխան տողի վանդակում կատարվում է «V» նշում:

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍԻ**

Հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է ՇՊՀ գիտական խորհրդի _____ նիստում հետևյալ կազմով՝

Հ	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ
1.	Ազգանուն, անուն (նախազահ)
2.	Ազգանուն, անուն
3.	Ազգանուն, անուն
4.	Ազգանուն, անուն
5.	Ազգանուն, անուն

ՇՊՀ գիտական խորհրդի _____ անդամից ներկա էին _____-ը:

Քվեարկվել է _____ ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածությունը:

Քվեարկությանը մասնակցել է ՇՊՀ գիտական խորհրդի _____ անդամ:

Բաժանվել է _____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

Հ	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՋՆՎԱՎԵՐ
1.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ			
2.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ			

Անվավեր քվեաթերթիկների քանակը _____:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով _____ ընտրված է (ընտրված չէ)

_____ ամբիոնի վարիչի պաշտոնում:

Հաշվիչ հանձնաժողովի նախազահ՝ _____
ստորագրություն ազգանուն, անուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. _____
ստորագրություն ազգանուն, անուն

2. _____
ստորագրություն ազգանուն, անուն